

*Saryan Haypost*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ  
ՊԱՅՍԱՆԱԳԻՐ

SUBSCRIPTION AND DELIVERY  
CONTRACT

«ՀԱՅՓՈՍ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

“HAYPOST”  
CLOSED JOINT STOCK COMPANY

և

And

«ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ»

“.....”

Կնքված

Signed on

08.02.2016

..... 201..

Սարյան 22, Հայփոստ  
Երևան  
Հայաստանի Հանրապետություն

22 Saryan str, Haypost  
Yerevan  
Republic of Armenia

Փաստաթղթի տեսակը	Համարը	Տարին	Document Type	Number	Year
SUB 20	SB-20-02-16	2016.02.20	SUB	SB-...-..	2015

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերության «Հայփոստ արևելք» մասնաճյուղը (այսուհետ՝ «Ընկերություն»), ի դեմս մասնաճյուղի տնօրեն Վ. Հովհաննիսյան-ի, որը գործում է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատարի կողմից 2013թ. դեկտեմբերի 03-ին տրված թիվ 1762-Ա հրամանի հիման վրա, և «Տավուշի մարզպետարան»-ը, ի դեմս Տավուշի մարզպետ. աշխ.դեկ. Ս. Դավթյան-ի (այսուհետ՝ «Հաճախորդ»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդին առաքել թերթեր և/կամ ամսագրեր Հաճախորդի կողմից պատվիրված ցանկին համապատասխան՝ սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման պայմաններով ու ժամկետներում (այսուհետ՝ Բաժանորդագրության ծառայություններ), իսկ Հաճախորդը պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների համար սույն պայմանագրի պայմաններին համապատասխան և կատարել սույն պայմանագրով նախատեսված իր այլ պարտավորությունները:

1.2 Սույն պայմանագրով սահմանված բաժանորդագրության ծառայությունը Ընկերությունը Հաճախորդին մատուցում է սույն պայմանագրի պայմանների և Ընկերության գործունեության նկատմամբ կիրառվող իրավական ակտերին համապատասխան:

1.3 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 31.12.2016թ-ը: Սույն պայմանագրի գործողությունները տարածվում է 01.01.2016թ-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

## 2. Ծառայությունների մատուցման պայմանները

2.1 Սույն պայմանագրով սահմանված բաժանորդագրության ծառայություններից օգտվելու նպատակով Հաճախորդը լրացնում է դիմում, որում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

2.1.1 Բաժանորդագրության ծառայություններից օգտվելու Հաճախորդի առաջարկը.

2.1.2 Բաժանորդագրվող թերթերի և/կամ ամսագրերի անվանացանկը համաձայն Ընկերության 2016թ-ի և «Ռոսպեչատ» գործակալության 2016 թ. I կիսամյակի բաժանորդագրության կատալոգում ներկայացված անվանացանկի.

«.....» Branch of "HayPost" Closed Joint Stock Company (hereinafter referred to as "Company"), represented by the Branch Director ....., acting on the basis of the Order N 1762-Ա Issued on December 3<sup>rd</sup> 2013 by the Acting Chief Executive Officer of "Haypost" CJSC, and «.....», represented by the Director ..... (hereinafter referred to as "Client"), signed this Contract on the following:

## 1. Object

1.1 Under this Contract the "Company" undertakes to deliver newspapers and/or magazines to the "Client" according to the list ordered by the latter within the conditions and terms hereof (hereinafter referred to as "Subscription services") and the "Client" is obliged to pay for the services rendered according to the conditions hereof and carry out its other obligations under this Contract.

1.2 The Company provides the "Executor" with Subscription services defined in this Contract compliant to the conditions and to legal acts exercised in Company's activities.

1.3 The present Contract comes into force since the moment of having been signed and remains valid till 31.12.2016. The present Contract covers the relationship developed between the Parties since 01.08.2016.

## 2. Conditions of Service Provision

2.1 To make use of the Subscription services under this Contract the "Client" fills in an application form with the following information:

2.1.1 The "Client's" suggestion to make use of the Subscription services.

2.1.2 The name list of the newspapers and/or magazines subscribed according to those in Company catalogue for the year 2016 and the name list of "Ropechat" agency for the first semester of 2016 .

2.1.3 Նշում է կատարում այն մասին, որ բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը Ընկերության փոստատարի կողմից Հաճախորդին պետք է հանձնվեն՝

- ա) Հաճախորդի փոստային բաժանորդային պահարանում տեղադրելու միջոցով,
- բ) փոստային կապի օբյեկտում (փոստային բաժանմունքում) գտնվող և Հաճախորդի կողմից օգտագործվող փոստային անվանական պահարանում տեղադրելու միջոցով, կամ
- գ) Հաճախորդին առձեռն նրա բնակության կամ գտնվելու վայրի հասցեում հանձնելու միջոցով:

2.1.4 Եթե բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը Հաճախորդին հանձնվելու են նրա բնակության կամ գտնվելու վայրի հասցեում կամ տեղադրվելու են Հաճախորդի փոստային բաժանորդային պահարանում, ապա Հաճախորդը նշում է իր բնակության/գտնվելու վայրի ճշգրիտ հասցեն և փոստային դասիչը.

2.1.5 Եթե բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը Հաճախորդին հանձնվելու են վերջինիս կողմից օգտագործվող փոստային անվանական պահարանում տեղադրելու միջոցով, ապա հաճախորդը ճշգրիտ նշում է այն փոստային անվանական պահարանի համարը և դրա գտնվելու վայրը (փոստային բաժանմունքի դասիչը), որում պետք է տեղադրվեն բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Բաժանորդագրության պայմանագրի և փոստային անվանական պահարանի տրամադրման և սպասարկման պայմանագրի ժամկետները պետք է լինեն նույնը.

2.1.6 Հաճախորդը լրացնում է դիմումին կից անվանացանկի թերթիկը համաձայն ներկայացված աղյուսակի, լրացնում է դիմումի ձևաթղթում նշված այլ տեղեկատվությունը և ներկայացնում է սույն պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և դիմումի ձևաթղթում նշված փաստաթղթերը:

2.2 Սույն պայմանագրի 2.1.3. կետի «գ» ենթակետով սահմանված Հաճախորդին առձեռն հանձնելու գործընթացը համարվում է իրականացված, եթե Ընկերության փոստատարի կողմից բաժանորդագրված թերթերը և/կամ ամսագրերը հանձնվել են անձամբ ֆիզիկական անձ Հաճախորդին կամ Հաճախորդի հետ համատեղ (նույն հասցեում) բնակվող անձանցից որևէ մեկին կամ հանձնվեն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող Հաճախորդի համապատասխան աշխատակցին կամ ստորաբաժանմանը (կազմակերպության քարտուղարություն, ընդհանուր բաժին, կազմակերպության մուտքի մուտ գտնվող անվտանգության աշխատակից և այլն).

2.1.3 Makes a note that the newspapers and/or magazines subscribed should be delivered to the "Client" by the Company's postman:

- a) by placing them in the "Client's" P/O box by placing them in the P/O box used by the "Client" in the post office, or
- c) by delivering them in person to the current address of the "Client".

2.1.4 In case the newspapers and/or magazines are to be delivered to the "Client" to the latter's current address or are to be placed in P/O box of the Client, then the "Client" mentions his exact current address and postal code.

2.1.5 In case the newspapers and/or magazines subscribed are to be delivered to the "Client" by placing them in the P/O box used by him, then the "Client" the number of the P/O box and its location/postal code of P/O/, where are to be placed the newspapers and/or magazines subscribed. It being known that under this point the terms of Subscription Contract and that of P/O boxes should be the same.

2.1.6 The "Client" fills in the name list sheet of the application according to the chart presented, fills in other information given in the application form and submits the documents mentioned in it needed for signing this Contract.

2.2 The delivery in person defined in point 2.1.3 /c/ hereof is considered executed if the newspapers and/or magazines subscribed have been delivered by the postman to the "Client" that is a physical entity or a person who lives with the latter /at the same address/ or to the corresponding employee or division /secretariat, office, security officer, etc./ of the "Client" who is a legal entity or private entrepreneur.

2.3 Հաճախորդը լրացված դիմումը ստորագրում և ներկայացնում է Ընկերության համապատասխան իրավասու աշխատակցին և ստորագրում է իրավասու աշխատակցի կողմից տրամադրված բաժանորդագրության պայմանագիրը:

2.3 The "Client" signs and submits the filled in application to the corresponding authorized employee of the Company and signs Subscription Contract given by the authorized employee.

2.4 Հաճախորդի կողմից լրացված դիմումը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 The application filled in by the "Client" is deemed integral part hereof.

2.5 Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի կողմից բաժանորդագրված յուրաքանչյուր թերթը և/կամ ամսագիրը Հաճախորդին հանձնել դրանց՝ Ընկերության կողմից ստացման աշխատանքային օրվա ընթացքում:

2.5 The Company is obliged to deliver each subscribed newspaper and/or magazine to the "Client" within the working day the Company receives it.

2.6 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Բաժանորդագրված թերթերի և/կամ ամսագրերի Հաճախորդին չհանձնման այնպիսի դեպքերի համար, որոնց տեղի ունենալու համար պատճառ են հանդիսացել հետևյալ հանգամանքները.

2.6 The Company bears no responsibility for non-delivery of the subscribed newspapers and/or magazines to the "Client" for such cases the reasons of which were the following circumstances:

2.6.1 Հասցեական առաքման դեպքում Հաճախորդի նշած հասցեում առաքման ժամկետին դուռը փակ է եղել.

2.6.1 In case of addressed delivery at the address mentioned by the "Client" the door has been closed at the moment of delivery;

2.6.2 Տեղի է ունեցել Ընկերության

արտադրաշահագործական գործընթացի խափանում, որի արդյունքում բաժանորդագրված առաքանիները հնարավոր չէր ժամանակին հանձնել Հաճախորդին: Ընդ որում, նման դեպքերում Ընկերությունը բաժանորդագրված առաքանիները հաճախորդին է հանձնում սահմանված ժամկետի ուշացումով, Հաճախորդին հայտնելով տեղի ունեցած արտադրաշահագործական գործընթացի խափանման մասին.

2.6.2 There has been a break in the production and exploitation process of the Company as a result of which it was not possible to deliver the items in time. It being known that in such cases the Company delivers the items subscribed with a delay in the terms by informing the "Client" about such a break;

2.6.3 Տեղի է ունեցել ֆորս մաժորային իրադարձություն, որի պատճառով ընկերությունը հնարավորություն չի ունեցել կատարել սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները.

2.6.3 In case of Force Majeure due to which the Company couldn't execute its obligations under this Contract;

2.6.4 Սահմանված վայրից բացակայել է փոստային բաժանորդային պահարանը կամ նշված պահարանը գտնվել է այնպիսի վիճակում, որ բաժանորդագրված առաքանու տեղադրումը տվյալ պահարանում Ընկերության փոստատարի գնահատմամբ կհանգեցնեք առաքանու կորստի կամ վնասվածքի: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված դեպքերում Ընկերության փոստատարը Բաժանորդագրված առաքանին հանձնում է Հաճախորդին առձեռն նրա բնակության/գտնվելու վայրի հասցեում, իսկ դրա անհնարինության դեպքում Ընկերությունը ծանուցում է Հաճախորդին առաջարկելով փոփոխել սույն պայմանագրի պայմանները (լրացնել նոր դիմում նշելով հասցեական առաքման եղանակը) կամ պատշաճ վիճակի բերել փոստային բաժանորդային պահարանը:

2.6.4 The P/O box was missing in the defined location or the P/O box was in such a condition that placing the subscribed item in that P/O box could result in the loss or damage of the item according to the Company postman's opinion. It being known that in cases defined under this point the Company postman delivers the item subscribed to the "Client" in person at his current address and if it is not possible, the Company notifies the "Client" by suggesting changing the conditions of this Contract /fill in a new application form by mentioning addressed delivery way/ or improve the condition of the P/O box.

2.7 Ընկերությունը Բաժանորդագրված առաքանիների չհանձնման կամ ուշացումով հանձնման համար պատասխանատվությունը չի կրում մաև այն դեպքերում, երբ նման ուշացումները կամ չհանձնման դեպքերը տեղի են ունեցել Բաժանորդագրված առաքանին թողարկող ընկերության (այսուհետ՝ Թողարկող) մեղքով: Մասնավորապես, թերթերի և/կամ ամսագրերի համապատասխան համարը չի թողարկվել, թողարկվել է ուշացումով կամ Թողարկողի կողմից ընկերությանը հանձնվել են սահմանված ժամկետի ուշացումով կամ ոչ լրիվ քանակով կամ Թողարկողի կողմից թույլ տրված այլ խախտումներով: Ընկերությունը Հաճախորդին տեղեկացնում է սույն կետով սահմանված փաստերի մասին գրավոր (փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) կամ բանավոր՝ հեռախոսազանգի կամ փոստատարի այցելության միջոցով:

2.7 The Company doesn't bear responsibility also in such cases when the reason for delay or non-delivery of the subscribed items were the companies issuing the delivery items subscribed/hereinafter referred to as Publisher/. In particular, corresponding issue of the newspaper and/or magazine was not published, or was published with delay or not in the full quantity or there were other infringements by the Publisher. The Company informs the "Client" about the facts under this point in writing /via post or e-mail/ or orally by a phone call or a postman's visit.

2.8 Հաճախորդը իրավունք ունի սույն պայմանագրի գործողության ընթացքում ավելացնել առաքվող թերթերի և/կամ ամսագրերի (պարբերականների) տեսակները, որի դեպքում նոր հայկական թերթերի և/կամ ամսագրերի համար Հաճախորդը լրացնում և ընկերությանն է ներկայացնում սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված նոր ցանկը յուրաքանչյուր ամսվա համար մինչև նախորդ ամսվա 25-ը, իսկ արտասահմանյան պարբերականների դեպքում՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև նախորդ ամսվա 15-ը:

2.8 The "Client" has the right to increase the types of the newspapers and/or magazines delivered and in that case the "Client" fills in and submits to the Company the new list defined in Annex 1 hereof for new Armenian newspapers and/or magazines for each month before the 25th of the preceding month and in case of foreign periodicals each month before the 15th of the preceding month.

### 3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

### 3. Rights and obligations of the Parties

#### 3.1 Ընկերությունը պարտավոր է՝

#### 3.1 The Company is obliged to

3.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով, սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

3.1.1 Provide quality Services in accordance with the contractual provisions;

3.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում

3.1.2 Provide the Services fully within the terms under this Contract;

3.1.3 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

3.1.3 Carry out its other obligations defined under this Contract.

#### 3.2 Ընկերությունն իրավունք ունի՝

#### 3.2 The Company is entitled to:

3.2.1 Պահանջել Հաճախորդից՝ սույն պայմանագրով նրա կողմից ստանձնած վճարման և այլ պարտավորությունների պատշաճ կատարում.

3.2.1 Demand from the "Client" to properly execute its paying and other obligations under this Contract;

3.2.2 Իրացկանացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

3.2.2 Realize its other rights under this Contract.

#### 3.3 Հաճախորդը պարտավոր է՝

#### 3.3 The "Client" is obliged to:

3.3.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել Ծառայությունների մատուցման համար.

3.3.1 Pay for the "Services" in the order and terms defined by this Contract;

3.3.2 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի կամ այլ պայմանների

3.3.2 Inform the Company in case there are complaints in regard to the quality of Services provided by the

- վերաբերյալ բողոքներ ունենալու դեպքերում անհապաղ տեղեկացնել դրանց մասին Ընկերությանը՝ պահպանելով սույն պայմանագրի 3.4.3 ենթակետով սահմանված պայմանները.
- 3.3.3 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված) տեղեկություն չտարածել (հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով) Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի և այլ պայմանների վերաբերյալ.
- 3.3.4 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:
- 3.4 Հաճախորդն իրավունք ունի՝
- 3.4.1 Պահանջել Ընկերությունից Ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ կարգով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.
- 3.4.2 Տեղեկատվություն ստանալ մատուցված ծառայությունների պայմանների կամ ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ.
- 3.4.3 Ծառայությունների մատուցման պայմանների և սպասարկման որակի վերաբերյալ դժգոհություններ կամ բողոքներ ունենալու դեպքում գրավոր՝ փոստի կամ էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև սույն պայմանագրում նշված հեռախոսահամարով Ընկերությանը հայանել իր բողոքն ու դժգոհությունը՝ Ընկերությունից պահանջելով սահմանված ժամկետներում և կարգով լուծում տալ առաջադրված խնդիրներին.
- 3.4.4 Իրացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:
4. Ծառայության դիմաց վճարման չափը, կարգը և այլ պայմանները
- 4.1 Սույն պայմանագրով սահմանված Ծառայության դիմաց Հաճախորդը Ընկերությանը վճարում է բաժանորդագրված պարբերականների ընդհանուր գումարը՝ համաձայն Բաժանորդագրության կատալոգով սահմանված սակագների:
- 4.2 Վճարումը կատարվում է կանխավճարի ձևով Ընկերության կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրի հիման վրա:
- 4.3 Յուրաքանչյուր այնպիսի դեպքերում, երբ Հաճախորդը սույն պայմանագրի 2.7 կետով սահմանված կարգով ավելացնում է պատվիրված քերթերի և/կամ ամսագրերի քանակը՝ համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո Ընկերությունը ներկայացնում է հաշիվ ապրանքագիր, որի համաձայն վճարումը կատարվելուց հետո
- Company and any other conditions within the conditions defined in point 3.4.3.
- 3.3.3 Not spread any false or not clarified information /in public or non public ways/ about the quality of the services provided by the Company and other conditions;
- 3.3.4 Carry out its other obligations under this Contract.
- 3.4 "Client" has the right to
- 3.4.1 Demand from the Company to properly and timely execute its Services according to the conditions under this Contract;
- 3.4.2 To be informed about the service conditions or service provision process;
- 3.4.3 Inform the Company in writing vis post or e-mail or phone number hereof in case there are complaints in regard to the quality and conditions of Services provided by the Company and demand the Company to solve those problems in the terms and order defined.
- 3.4.4 Realize its other rights under this Contract.
4. The amount and order of payment and other conditions
- 4.1 For the "Service" the "Client" pays the Company the total amount of the subscribed periodicals based on the prices fixed in Subscription catalogue.
- 4.2 The payment shall be an advance payment based on the invoice presented by the Company.
- 4.3 Each time the "Client" increases the number of the ordered newspapers and/or magazines in the order defined in point 2.7 hereof, the Company presents an invoice after making corresponding changes and once the payment is made, the changes come into effect.

փոփոխությունը մտնում է ուժի մեջ:

4.4 Սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքերում Ընկերությունը կատարում է վերահաշվարկ և Հաճախորդին հետ է վերադարձնում Պայմանագրի լուծման օրվանից մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի համար Հաճախորդի վճարված կանխավճարը:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5.2 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհարթահարելի ուժի հանգամանքների ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 6. Վեճերի լուծման կարգը

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում Պայմանագրի հիման վրա Հաճախորդի կողմից Ծառայության դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով վճարումները կատարելու պահից և գործում է մինչև՝ 31.12.2016թ.:

7.2 Սույն պայմանագրում պարզաբանումներ, փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու պայմանով:

7.4 Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են Կողմերի կողմից, եթե

4.4 In case this Contract is terminated at an early date the Company makes final settlement and pays the "Client" back the advance payment made for the period beginning with the termination date till the last day of the term of the Contract.

## 5. Liability of the Parties

5.1 The Parties shall be held liable for non-fulfilment or improper fulfilment of their obligations under this Contract in the order defined by the RA Legislation and other legal acts.

5.2 The Parties shall be released from any liability for non-fulfilment or partial fulfilment of their obligations under this Contract, if it has been caused due to a force majeure event which arose after signing this Contract and which the Parties could not foresee and prevent.

## 6. Settlement of Disputes

6.1 All the disputes arising in relation to this Contract shall be settled through negotiations. Should the Parties fail to reach an agreement, the disputes shall be solved in the order defined by the RA Legislation.

## 7. Final Provisions

7.1 This Contract comes into effect and is obligatory for the Parties from the moment the "Client" makes payment for the services in the order and amount defined by this Contract and is valid till 31.12.2016.

7.2 Any amendment or addendum to this Contract shall be valid by mutual agreement of Parties and in the order defined by the Legislation by signing Additional agreements that shall be deemed integral parts of the Contract.

7.3 This Contract shall be subject to termination by either of the Parties through a written notice to the other Party one month in advance.

7.4 All the written notices under this Contract are acceptable by the Parties provided they were made at

դրանք կատարվել են սույն պայմանագրի 8-րդ կետով սահմանված իրավաբանական հասցեներով կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

Ընկերություն՝ subscription@haypost.am

Հաճախորդ՝ \_\_\_\_\_@\_\_\_\_\_

the legal addresses defined in point 8 under this Contract or at the following e-mail:

Company subscription@haypost.am

Client \_\_\_\_\_@\_\_\_\_\_

7.5 Սույն պայմանագրի 8-րդ կետում նշված վավերապայմաններում և սույն Պայմանագրի կնքման համար Հաճախորդի ներկայացրած դիմումում և դրան կից փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքերում Կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերում է բանկային վավերապայմաններին, Հաճախորդի հասցեին, էլեկտրոնային փոստի հասցեներին:

7.5 Provided there have been made certain changes in the requisites under point 8 and in the application form presented by the "Client" for signing this Contract and in the documents attached to it, the parties notify each other about that within 3 days after such a change has been made or immediately in case the change is made in the banking requisites, Client's address and e-mail.

7.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս օրինակից /երեք օրինակը տրվում է Ընկերությանը, մյուսը՝ Հաճախորդին/:

7.6 This Contract is drawn up of two legally equal copies both in Armenian and English languages/one copy is given to the Company, the other one to the Client/.

8 Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային տվյալները և կողմերի ստորագրությունները

8. Legal addresses, Bank details and Signatures of the Parties

«Ընկերություն» / Company

«Հաճախորդ» / Client

«Հայփոստ» ՓԲԸ/HayPost CJSC  
ք.Երևան, Սարյան 22/ 22 Saryan Street, Yerevan  
ՀՀ / a/c 1930003703150900  
«Կոնվերսբանկ» ՓԲԸ /Converse Bank CJSC  
ՀՎՀՀ/Tax Code: 02507464  
հեռ./Tel: 010/514-512

«Տավուշի» / «մարզպետարան»  
Հասցե/Address: ք. Իջևան, Սահմանադրության 1  
ԳՅ / a/c 900371051039  
Բանկ/Bank: Իջևանի ՏԳԲ  
ՀՎՀՀ/Tax Code: 07611324  
հեռ./Tel: 094 01 59 40

«Հայփոստ արևելք» մասնաճյուղի տնօրեն  
«.....» branch director

Տնօրեն / Director:

Վ. Հովհաննիսյան

Ս. Դավթյան

